

ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ԲԱԲԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

— ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ —

(ԹՈՒՆԱԿԱՆՆԵՐ ՆԻ ՆՕԹԵՐ)

Տպագրուած իր առաջին գործն է, կա-
րելի է ըսել, թուրքերէն թանկագին գըր-
քոյի մը, «Միւսմանք» (Տուա քիթապը)։
Աղօթագիրք, յատկապէս պատրաստուած
թուրքերէն խօսող Հայոց համար, առաջար-
կութեամբ Այնթապի իր բարեկամներուն։
Դեռատի հոգեւորականը իր այս ձեռնարկով
կարծես թէ սրտի պարտք մը կ'ուզէ կա-
տարել՝ հայ հոգիէն զոյսնած աղօթքներ
գրի առնել հայ տառերով բայց այն լեզուով,
որ իր օրօրոցի եւ մանկութեան լեզուն էր
եղած, որով ստացած էր իր կրօնքին եւ աղ-
ջին ուսմանց նախատարերքը, ու այս՝ հի-
մալ իր կողմէն անոնց համար, որոնցմէ
երբեմն սորված էր այդ ամէնը, իր պատ-
ուական մայրիկին եւ հօրը, որոնք առաջին
ուսուցիչներն եղած էին իր աղածի թո-
թովանքներուն՝ այդ բարբառով, իր բա-
րեկամներուն եւ բոլոր հայրենակիցներուն,
որոնց հետ հանապազորդ իր շնորհաբերու-
թիւններուն կը պարտէր ինչ որ ընդունած
էր իբրեւ հիմ իր սոհմային եւ եկեղեցական
գաւառիարակութեան, ա՛յդ լեզուով՝ բայց
հայ հոգւով։ Յիշողութեանս մէջ է պատ-
կերը իր բարեպաշտ ծերունի ծնողքին, ու-
րոնք քաղաքական այն գէշ օրերուն մինչեւ
Մուշ էին գացեր՝ իրենց ազգիկն առաջ-
նորդական շնորհներուն սփոփանքը վայե-
լելու համար, ու կը կարծեմ թէ այդ ըս-
տիփանքը ո՛րքան աւելի քաղցրացեր էր
հիմալ իրենց սրտին խորը, հիւր այդ գըր-
քոյիւ ձեռքերին, ահոր մէջ կը կարգալին
կամ կը լսէին անոր գրիչէն տողուած սա
բաւերը. «Եմ՝ բապա՛ սէն պէնիմ իւմիտիմ
սին, խաթալարմըն զափուրը սըն, տեօ-
քիւլէն կէօզեաւալարմա նազար գըլ, եմ՝
Ալլահ, պանա բահմ էյյե» (Յոյս իմ ես
գու, Տէր, բաւի յանգանաց իմոց, մի՛ տե-
սես առնէր զգոխումս արեստուաց իմոց,
ողորմես՝ իմն Աստուած)։ Այդ սփոփանքը,
պէտք է աւելցնել հոս, միայն իրեններուն

կամ իր հայրենակիցներու շրջանակին մէջ
չսահմանափակուեցաւ։ Կարճ ժամանակի
մէջ Աղօթագիրքին երկից վերապագրուիլը,
կը ցուցնէ արգէն թէ ի՞նչ ջերմ ընդունե-
լութիւն գտած էր ան բոլոր թուրքերէնա-
խօս հայերուն մէջ, եւ ի՞նչ հոգեւոր ու նաեւ
ազգային սնունդ մատուցած անոնց, ու-
րոնք իրենց ազգային զգացումը իրենց Ն-
կեղեցիին շունչովն է որ կը պահէին միշտ։

Ու այս ծառայութիւնը կը ցած է մա-
տուցանել ծոցի օրացոյցի մեծութեամբ քիչ
աւելի քան 300 էջ միայն պարունակող այս
փոքրիկ գիրքը, մասնաւորապէս իր ներքին
արժէքին շնորհիւ. նախ՝ գրեթէ գրական
բայց ոչ նաեւ անօղորդական լեզուին,
որ քրիստոնէացած թուրքերէնի, յայպէս
ըսենք, ամենէն սիրուն մէկ ձևն է, իր մէջ
չ'ունենալով ո՛չ տաճկացած Տելեմաքի կամ
Կիւլիստանի խրթնաբանութիւնները, ու ոչ
ալ այն ռասիկ տափակութիւնները, ուր
պառկեցուցած են երբեմն այդ լեզուն՝
թուրքերէն սովորած ու գրող եւ քարոզող
Ամերիկացի միսիոնարները եւ իրենց յոյն ու
հայ հետեւորդները։ Դրքոյկին երկրորդ եւ
աւելի կարեւոր առաւելութիւնն է իր կազ-
մութիւնը։

Մեր մէջ գրեթէ անծանօթ մնա-
ցած է աղօթագիրք կազմելու, այսինքն
աղօթքը եւ պաշտամունքը հաւատացեալին
սրտին հետ սերտ հաղորդակցութեան մէջ
գնելու արուեստը կամ մեթոտը, որոնք
այնքան բազմակերպ եւ բազմօգուտ ձևերով
կիրարկուած են լատին կաթոլիկ եկեղեցւոյ
մէջ։ Ասորը զլլաւոր պատճառը թերեւս այն
է եղած որ մեր մէջ շատ կանուխէն սովո-
րութիւն դարձած է ժամապիւրքը միայն
նկատելի բուն մեր աղօթագիրքը, որպէսզի
կարծես քաղաքներու ջրլլայ հանդիպողին
աղօթք մը յօրինելու եւ ուրիշին պարտա-
գրելու քմայքը, յետոյ, հոգեկից հին միծ
վարդապետներու, զոր օրինակ նարեկացիի

աղդեցուծիւնը այնքան տիրական եղած է սիրտեբուն վրայ որ առանձնական աղօթքի պէտքերն տարբեր կամ այլապէս ձեռով գոհացում տալու հարկադրանք ինքնին աւելւորի է նկատուած: Եւ սակայն, այդ կերպերը իրենց ժամանակին մէջ միայն, երբ ժողովուրդին իր եկեղեցիին և անոր պաշտամունքին հետ հանապազողոր շատ ջերմ կապը իրական էր, կրնային գործնական ըլլալ:

Երբ հանգամանքները հետզհետէ փոխուեցան, պէտք էր սպասել կամ ուսումնասիրել նոր կերպեր, նախ՝ Եկեղեցւոյ ամենօրեայ կամիզէթ սօսնական և կիրակի օրերու աղօթքն պարզեցնելը և Ս. Պատարագի խորհուրդը ժողովուրդին հասկնալի և մատչելի դարձնելու, և յետոյ՝ առանձնական աղօթքը հաճախացնելին հրապուրել և պարտաւորական ընծայելու համար: Այդ պէտքերէն առաջինին՝ մեծ չափով բաւականութիւն տուած եղաւ անշուշտ հանգ. Տ. Յովհաննէս Քն. Մկրտանի բացայայտեալ և բացատրեալ առձեռն ժամագիրքը, իր ատենին ստոյգ ժողովրդականութիւն գտած գիրք մը, որ երեսնի թէ շարունակուող վերատպուելի միշտ, երկրորդ պէտքերն գոհացումին է որ կը մօտենայ իր այս գիրքով Բարսեղի վրդ., շատ ողջամիտ դիտաւորութեամբ՝ առանձնական աղօթքին զգացումը ոգեւորելու, առանց բոլորովին անշատեւու զայն հարաբարկաց պաշտամունքի շարաբերութեանէն: Այս պատճառաւ, նախ ժամագիրքէն քաղուածաբար և յոյժ բարեյայնող ընտրութեամբ կ'առնէ զխաւոր ժամերգութիւններու աղօթքներէն տասնեկէցը, բացի «Հանգանակ Հաւատոյն» և «Փառք ի բարձունս»էն, զոր օրինակ, ի մէջ այլոց, «Զքէն գոհանամք», «Տէր երկնի և երկրին», «Լուր ձայնից մերցոց», «Հայր բնածն», «Շնորհատու բարեացք» ևայլն, և ապա ամբողջ ձեկեսցէ՛ի կարգը, «Տէր ամենակալը», ևայլն, յետոյ Սաղմոսէն՝ ի մէջ այլոց «Տէր հովուեսցէ զիս», «Պաշարեցոսն», «Ողորմեա՛ ինձ Աստուածք. Շարակնոցն» 41 կտորներ, ամէնքն ալ ապաշխարութեան կանոններէն սրտառուէ կտորներ, նարեկներ՝ 12 բան. Ագաթանգեղոսէն՝ եօթը կտոր, Լուսաւորչիի և Հռիփ-սիմէ կոյսի պատկանեալ աղօթքներէն, Ոսկեբերանի «Որ օրհնես զայնօրսիկը», Լամբրոնացիէն՝ երեք կտոր, ԺԴ. դարու Վար-

դան վրդ. ին աղօթքներէն՝ «Անակիրն Սատուածք», ևայլն: Գործին ծայրը դրուած են կարգ մը աղօթքներու զբաբար բնուելիքներն ալ, ինչպէս և թրքերէնէ հայերէն բառացուցակ մը:

Այս քանի մը մանրամասնութիւնները զնեւով այս տեղ Մկնաճաքի այդ հրատարակութեան առթիւ, մեր գիտումն էր մատնանշել մասնաւորապէս ժողովուրդը իր Եկեղեցիին վրայ տաքցնելու և Հայ Հասարակութեան մէջ իր կրօնքին և դաւանանքին ուսումովը հոգեւոր կեանքի գիտակցութիւնն մշակելու, աղօթքի և ազգային պաշտամունքի սէրը վառ պահելու այն ջանքը, որ մինչ և վերջը զինքը մտահոգող զգացումը եղաւ, և ուր իր հանրային գործունէութեան առաջին օրերէն, Սամսոնի պաշտօնավարութենէն՝ որ պատրաստուած է այս ձեռնարկը, զինքը մտադրուեց ջերմօրէն:

Նոյն այդ զգացման արդասիքն է իր ուրիշ մէկ գործը, «Ժողովրդին Տօնացոյցը», զոր Սամսոն գրած էր 1899ին, և հրատարակեց յետոյ Կ. Պոլսի, 1901ին: Ութամալ, 87 էջերու պարունակութեամբ կազմուած այս տետրակը ամփոփում մըն է «Տօնացոյցի ու տօներու մասին կարեւոր և պարզ գիտելիքներու», հայ եկեղեցւոյ պաշտամունքին տօնական մասին վերաբերմամբ տեղեկութիւններ և լուսաբանութիւններ տալով եւսման համար յատկապէս ժողովուրդին մէջ: Ոչ Եկեղեցագիտական, ո՛չ ալ Տօնաբարկական ձեռնարկ մը է և ան անշուշտ, նման Հ. Վրթ. Ասկէրեանի և Հ. Քալ. Սիրամէլեանի Վենետիկ հրատարակածներուն, առաջինը 1782ին, և երկրորդը 1818ին, ոչ ալ դեռ ուրիշներու գրածին, մասնաւորապար անոր՝ զոր հանդ. Օրմանեան Սրբազան զանազան ձեւերով և ընդարձակագոյն ծրարով լուսւմնասիրեց մինչեւ վերջերս: Բարգէն Վրդ. ի այս գործը աւելի կը յիշեցնէ Տ. Գրեւ Քն. Աղանեանի այդ ոճով մշակածը, և Օրմանեան Սրբազանէ զանազան առթիւներով լրագրաց և Տարեցոյցերու մէջ հրատարակածները, աւելի գիտելիք քան գիտութիւն, թէ և տեղ տեղ բանասիրական նկատողութիւններ և ակնարկներ էն պակսի, ինչպէս պիտի չկարենար արդար և ըլլալ, երբ իրեն պէ մէկն էր հեղինակը:

Յնդհանուրն, երկու մասերու կը բաժ-

նուր գրքոյը, առաջինին մէջ (5-43) կ'աւանդուին սոսկ տոմարական գիտելիքներ. երկրորդը (43-70) գրաւուած է սոնական ծանօթութիւններով, այսինքն տեղեկութիւններով՝ սոներու անուանակոչումին, հաստատութեան, նշանակութեան, կատարման եւայլնի մասին. բայց միայն Տէրու նիւներուն կամ փրկչականներուն համար:

Կը խորհիմ թէ այս գիրքը, իր համառօտ, պարզ և գործնական ձևին մէջ, ուստոնց համար նոյն իսկ, պէտք է ծառայած ըլլայ իրեն համար կէտադրուած նպատակին:

Աղօթագիրք և Տօնացոյց, այս երկու գրուածքները, նախախայրիքները իր տպագրուած գործերուն, թէև Պոլիս լոյս տեսած 1901ին, բայց երկուքն ալ Սամսոն պատրաստուած էին, ինչպէս տեսանք: Պոլսոյ մէջ իր մշակած գրականութիւնը առաւելապէս պատմաքննական և բանասիրական եղաւ: Մայրաքաղաքի մէջ հարկագրեալ բնակութեան, կամ, իր բառով՝ պանդղեւտութեան այդ շրջանին մինչև 1909 է որ ուսումնասիրեց և հրատարակեց, բացի քաղաքներէն զոր յիշեցինք, և վերոյիշեալ այս երկուքէն, Տրու կամ Մովսէր, Կոլոք, և Պատմանեան Գրիգոր Պատրիարքի Յիսասկանանք, իսկ ասոնցմէ զատ հրատարակեց նաև Եղիշեան (1908) և Հայ Եկեղեցին Բ. դարուն մէջ (1913) գործերը, զորս կանուխ գրած էր իբրև քեզ դպրոցական շրջանի աւարտման:

Մովսէրն է ընդհանրական Հայրապետութեան Միջին դարու այն կրիլիկեան նստոցներէն որոնց մէջ կարճ ժամանակի միջոցին հետզհետէ մէկէն միւսը տեղափոխուեցաւ կաթողիկոսական աթոռը, պատմական պարագաներու հոսանքին հետ: Այդ տեղ է որ, 1125-1147, նստաւ Գրիգոր Գ. Պահլաւունի, Շուգրէն յետոյ և Հռովմայէան առաջ, իրեն հետ ունենալով իր եղբայրը Ներսէս Շնորհալի, զոր հաւանաբար հոն իսկ ձեռնագրեց եպիսկոպոս:

Հակառակ որ Շնորհալի, իր Վիպասանութեան մէջ, Գրիգոր Նրէց՝ Մատթէոս Ուռհայեցիի պատմութեան շարունակողը, և Շնորհալոյ կենսագիրը մը, Յովհաննէս վրդ., շատ որոշ կերպով ճշգրտած են զայն, երկարատեան շփոթ մնացած է Մովսէրի աշ-

խարհագրական գիրքը: Այս շփոթութիւնը հաւանաբար հետեանքն է եղած հոմանուն նութեանէ յառաջ եկած թուրքացեալի մը. Մովսէր հասկցուած է իբրև ձայնաշրջուած ձեւը ծովի կամ ծովակ բառին, եւ ճիշդ եղած է հայրապետանոցին տեղը ցուցնելու ծովակ կամ լճակ եղած տեղ մը, հայաշատ վայրի մը մէջ: Այդ մտածումով Մովսէր շոյնացուցած են Արդշիի և Խարբերդի մէջտեղ գտնուած Կեօնիւհին (= ծովակ) հետ. ու կաթողիկոսանիստ շէնքը կամ գղեակը երեակայած են այդ փոքրիկ լիճին կղզեակին մէջ եղած լիւնութիւնը: Այսպէս ըսուած է ձեռագրի մը յիշատակարանին մէջ, ըստ Տաշեանի մը Յուցակի. այսպէս ընդունած և գրած են նաև Ջամէան իր Հայոց պատմութեան մէջ եւ Ինճիճեան Ջարմանալի է որ սխալը գրականութեան մէջ պատմագրութեամբ անցած է նաև Ժողովրդական կարծիքին մէջ, ծնունդ տալով գրոյցներու՝ Կեօնիւքի այդ կղզեակին եւ անոր մէջ բովանդակուած սրբապայտերու և Շնորհալիական սրբութեանց ըտուրջ, զորս Գարեգին վրդ. Սրուանձտանց, իր գաւառական ուղեգրութեանց միջոցին Խարբերդ և այդ վայրը այցելած ատեն այնքան սրբապայտ գեղեցկութեամբ գրի առած է իր «Թորոս աղբար»ին մէջ:

Ստուգութիւնն այն է սակայն որ Մովսէրի Հայրապետանոցը պէտք է եղած ըլլայ ոչ թէ Խարբերդի մօտ Մոփաց աշխարհին՝ այլ Եփրատացոց աշխարհին՝ այսինքն այժմու Մարաշի և Անիթապի միջակայ այն երկրամասին մէջ, որ ի հնումն կը կոչուէր Տրուք կամ Տրուքը: Պատմաքննական եւ աշխարհագրական այս ճշգրտումը առաջին անգամ Ալիշան էր ըրած 1873էն ալ առաջ, իր «Շնորհալի և Պարագայ իւր» գործին մէջ, զմայլելի յոտակամութեամբ նշմարելով թիւրքացեալութիւնը, և շեշտելով թէ Շուգրի Կարմիր վանքէն յետոյ, մէկ կողմէ Բիւզանդացոց տեղատուական նահանջին և միւս կողմէ Սելճիւքեանց յառաջխաղացումներու միջոցին, Հայրապետանոցը պէտք էր փոխադրուած ըլլար ոչ թէ այդքան հեռաւոր այլ մօտիկ վայր մը Հռովմայի, ուր պիտի տարուէր նաև քիչ յետոյ՝ Մեծ հայրենագէտին այս թէզն է որ իբրեւ մատուցուած յատակագիծ մը պատմաքննօրէն կ'ընդլայնէ և բանասիրական ուսումնա-

նաոիրութեամբ կը փաստարկէ Բաբգէն վրդ. իր այս գործին մէջ: Ատոր համար, խնամով կ'օգտագործէ ոչ միայն հայ մատենադրութեան վաւերագրները, այլ նաև օտար գիտնոց, մասնաւորապէս Տիւրքիէի, Սէյսի, Շլուսպէրկէի, Մասքէրոյի, մեծ Հանրագիտարանի են. այդ մասին գրածները: Ասոնց ամէնուն, Ալիշանի և իր մանաւանդ այնքան գիտնորէն յառաջ բերած ցուցմունքներուն եզրակացութիւնն այն է թէ ճիշտ կամ Տիւլիւս Բեռտոլտի ժամանակէն հաշկուած պէտք է ըլլայ իբրեւ սուրբ քաղաք մը. իր անունն իսկ, իբրեւ մէկ անձանց Տօլիքիստի կամ Տիւլիքիստի, որ Արամազդի մակդիրներէն մին էր, կը ցուցնէ թէ արեւելքի այս մեծ աստուածութեան նուիրուած էր, նման զոյգ Հիւրապոլիսներուն, որոնց մին, Կարէմիշ, (այսմեան Ճարապոլուսը) և միւսը՝ Մամպուճ, նոյն պաշտամունքով անուանի եղած են, առաջինը Բեռտական շրջանէն, երկրորդը՝ Հոռոմէական տիրապետութեան ներքեւ: Տիւլ կանուխէն կը թուի իր անունը տուած ըլլալ նաև իր շրջապարիս, որ, իբրեւ Տիւլուս գաւառ ծանօթ էր յետոյ, թէ՛ բիւզանդական և թէ՛ արաբական և խաչակրաց իշխանութեանց ատեն: Ուշակրաց օրով զբոսնելու մըն էր ան: Վերջապէս, երբ Ժ. դարուն Վասպուրականը բիւզանդացւոց անցաւ, և ներքին Հայաստանի բնակիչներէն շատեր ցրուեցան կայսրութեան միւս մասերուն մէջ, Սեբաստիա, ևն., այս տեղ ևս զաղթեցին Հայ բնտանիքներ, մեծամեծներ մասնաւոր:

Ասոնց մէջ եղած են նաև Պահլաւունիներ, անշուշտ Գ. Մագիստրոսի սերունդէն, չենք գիտեր ե՛րբ հոն հասած, բայց սա՛ որոշ է թէ ԺԲ. դարուն Տիւլքի Մովսիսիանի տէրն էր Ապրիատ, հայրը Գրիգոր Պահլաւունիի և ներսէս Շնորհալիի, որոնք հոն ծնած են: Այնպէս որ Շուրքէն մեկնելէն հետք, իրենց հայրենական կալուածն է որ կուգան անոնք, հոն է որ ապաստան կը գտնէ կաթողիկոսական աթոռը, քաղաքական դիպուածներէ հալածական, իբրեւ աւելի ապահով ամրոցի մը մէջ:

Դղեակին ծով անունը, Բաբգէն վրդ. կը վարանի բացատրել այն ջրկայքով որ տարւոյն մէկ մասին մէջ կը գոյանար Տիւլքի քաղաքին մէկ կողմը Սև լեռներէն հոսած

հեղեղներէն, և աւելի հաւանական կը գտնէ որ անկա ծագած ըլլայ Սօֆ անունէն, որով կը կոչուէր այդ սև լեռնաց այն վտին, որուն վրայ շինուած էր զղեակը: Մովսիսի կուսմը, փոխանակ ծովի, Ուրբերդի Կեօլնիւի աւանդութեան կազմութենէն վերջ միայն կրնայ եղած ըլլալ:

Այսպէս կամ այնպէս, իրական է ծառայութիւնը, զոր այս ուսումնասիրութիւնը մատուցած է Տիւլի աշխարհագրական գիրքը և ծովի հանգամանքը վերջապէս ճշգրտութեամբ:

Գրուածքին մէջ Տիւլի նուիրուած մասը կը գրուէ 60 էջեր միայն: Անոր կը կցուին 28 էջեր ևս, նուիրուած Հոռոմէական, պատմաքննական տեսութիւններով հիւսուած գլուխ մը, ուր տրուած են նաև անձնական տպագրութիւններ իր քանիցս այցելութիւններէն, զոր տուած է, եկեղեցական սքեմ հագնելէն առաջ, տակաւին աշակերտ Սկնիթապ, աւերակներուն ալլապէս նուիրական այդ սրբավայրին, որ Մովսիս յետոյ հայրապետանոց եղաւ 1147-1294, ուր գործեցին և իրենց կեանքը կնքեցին Գրիգոր Գ. Պահլաւունի և Շնորհալի հայրապետներ և իրենցմէ յետոյ գեո Եօթը կաթողիկոսներ, մինչև Անաւարդեցի, որուն օրով Աթոռը վերջնապէս փոխադրուեցաւ Սիս:

Մնացեալ 27 էջերը (29-116) յաւելուածական մասեր են, որոնք կը պարունակեն տեղագրական և պատմաքննական նօթքեր, իբրեւ լրացուցիչ լուսարարութիւններ նախորդ գլուխներուն, և հայերէն սիրուն քարտէզ մը Մովսիս-Տիւլք-Հոռոմէական մարզին:

Բաբգէն Վարդապետի գործերուն մէջ ամենէն աւելի գիտական ոգով պատրաստուածն է այս, իբրեւ կուս, ճշգրիտ և ապացուցական փաստարկութեամբ ընդլայնուած նիւթ. այս էր եղած դատումը Մասքէրոյի, որուն ինքը հաղորդած էր անոր պարունակութիւնը, երբ Վերատեսուչ էր նա Եփրատական Հնութեանց Թանգարանին ի Գահիրէ:

(Շարունակելի)

(6)

Գ.